

3483

618.2

W-28

12002

618.2

Խ-28

ԳՕՔՏՈՐ Վ. ԱԻ. ԽԱԶՐՏՐԵՆՆՑ

№ 5

ԲԱԶՄԱԾՆՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱՄԼՈՒԹԻՒՆ

— ԵՐ —

ՀԱԿԱԲԵՂՄՆԱԿՈՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Երկրորդ տպագրություն



Թ Ի Վ Լ Ի Ս

Տպարան «ՀԵՐՈՒՄ» Գրախոսական փող. № 6. Հեռախոս № 566.

1914

618.2

Խ-28

ԱԿ

ԳՕՁՏՈՐ Վ. ԵՐ. Խ՝ ՉՇՏՐԵՆՑ

610
100-ԽԱ

№ 5



ԲԱԶՄԱԾՆՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱՄԼՈՒԹԻՒՆ


— ԵՐ —

ՀԱԿԱԲԵՂՄՆԱԴՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

58101

Երկրորդ սպասարանին

285



Թ Ի Ը Լ Ի Ս

Տպարան «ՀԵՐՈՒՄ» Գրա-խիսալս փող. № 6. Հնարատ № 566.

1914

2010

18593

018
1914

ԵՐԿՈՒ ԽՕՍԹ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Լոյս ընծայելով ներկայ գրքոյկը, մեր նպատակն է՝ տալ ընթերցող հասարակութեանն որոշ գաղափար բազմաձևութեան և նրա հասցրած ֆիզիքական և բարոյական փաստակար հետևանքների մասին և միևնոյն ժամանակ՝ ցոյց տալով օրէնքների թոյլ տուած սահմաններում, այն բոլոր հակաբեղմնաւորական միջոցները, որոնցով կարելի կլինէր այդ չարիքների առաջն առնել, առաջ բերելով արուեստական ամուլթիւն:

Շատերը, մանաւանդ ժողովրդի ստորին խաւերը, ծանօթ չեն հակաբեղմնաւորական միջոցների հետ, այն ինչ՝ շատ յաճախ, հէնց այդ խաւերի մէջ, կարիք է զգացւում հակաբեղմնաւորական միջոցների:

Մինչդեռ երեկ հիւանդոտ ծնողը աշխարհ էր բերում տանջանքների մէջ հիւծուող սերունդ՝ շնորհիւ իւր տգիտութեան, այսօր այդ նոյն ծնողը պէտք է իմանայ, որ կան միջոցներ, որոնց գործադրութեամբ կարելի է խոյս տալ հիւանդոտ սերունդ առաջացնելուց:

Թոքախտաւորները, սիֆիլիսոտներն և մանաւանդ գինեմոլնները պէտք է իմանան, որ բացի իրաւակտն օրէնքներից՝ կայ և բարոյական պարտք ամեն մի անհատի վրայ, որ արգելում է ասելով՝ «եթէ հիւանդ էք, մի ամուսնացէք, իսկ եթէ հիւանդ ամուսիններ էք, խոյս տուէք երեխաներ ծնելուց»:

Դօքտոր Վ. Ա. Մաչատրեանց

Պետերբուրգ, 1914 թ.



Ազգերի առաջխաղացութեան, զարգացման և քաղաքակրթման հետ առաջ են գալիս որոշ հարցեր, որոնց մասին լսել և չխօսելը անկարելի է:

Ներկայ դարի առաջին օրերին, երբ լայնատարած Ռուսաստանն իւր ամբողջութեամբ մեծ փոփոխութիւնների շրջանը մտաւ, առաջ եկան նոր-նոր հարցեր, նոր-նոր խնդիրներ, որոնց լուծելու համար անհրաժեշտ էր կարծիքների փոխանակութիւն, գիտական մտքերի պարզաբանումն և զանազան թէօրեանների վերլուծումն: Նրման հարցերի շարքին է պատկանում և սեռական հարցը:

Մենք հայերս բաւական աղքատ ենք սեռական հարցի վերաբերեալ գրականութեամբ: Մինչև այժմս էլ մենք չենք թօթափել մեզնից այն անտեղի ծածկամտութիւնը, որոշ հարցերի վերաբերմամբ, որի պատճառով շատ անգամ տուժել ու զոհուել են շատերը: Թէպէտ մեր նպատակը չէ ներկայ աշխատութեան մէջ խօսել վերոյիշեալ «ծածկամտութեան» և նրա վատ հետևանքների

յոտսին, բայց օգտւելով առթից, պէտք է մի աւելորդ անգամ ևս կրկնենք այստեղ այն ցաւալի բռնակալ յարաբերութեան համար, որ տիրում է մեզնում՝ շատ յաճախ ծնողների ու երեխաների մէջ:

Ծնողները, նամանաւանդ մայրերը պէտք է իրենց երեխաների վերաբերմամբ ոչ միայն ծնող, այլ և մեծ ընկեր՝ խորհրդատու հանդիսանան, նրանք պէտք է զարթեցնեն երեխայի մատող հոգու մէջ մի այնպիսի զգացմունք, որով երեխան ընդմիշտ կապուած լինի իւր ծնողների հետ բացի որդիական սիրուց նաև ընկերական սիրով: Այսպիսի զգացմունքներով օժտուած որդիներն իրենց ծանր վշտերի մէջ միշտ սիւտփանք ու խորհուրդ են որոնում իրենց ծնողների մօտ ինչպէս մտերիմ ընկերներին: Այս տեսակ ընկերական, մտերմական յարաբերութեան բացակայութեանը պէտք է վերագրել այն բազմաթիւ անձնասպանութիւններից շատերը, որ կատարւում են մեզանում պատանեկական ու երիտասարդական հասակում, հրասթափուած կեանքի գաղանիքներից: Իսչպէս վերն էլ յիշեցինք, այս հարցը հեռուն կտանէ մեզ, այս հարցի մասին մենք կրիօսենք մի ուրիշ անգամ, իսկ ներկայիս մենք անցնենք մեզ հետաքրքրող խնդրի՝ սեռական կեանքի մի կարևորագոյն խնդրին՝ որդէծնութեան և մանաւանդ բազմածնութեան հարցին:

Ներկայ դարում, երբ ապրուստի բոլոր միջոցները թանգացել են, երբ կեանքի աննօրմալ ընթացքի շնորհիւ մարդկային օրգանիզմը թուլացել, հիւանդութեան դրութեան է հասել, երբ

հաց վաստակելու խնդիրն այլևս այնքան էլ հեշտ չէ, երբ աշխատաւոր ձեռքն ամբողջ օրն անդադար աշխատելով, հազիւ է կարողանում օրուայ պարէնը հայթայթել, հաց և բնակարան ունենալ, երբ չքաւորութեան մէջ հիւժուող ընտանիքին ամեն մի նոր անգամ՝ երեխայ աւելանալը նոր չքաւորութեան, նոր զրկանքների դուռ է բաց անում, աւիամայ առաջ է գալիս որդէծնութեան և մանաւանդ բազմածնութեան հարցը:

Ներկայ պայմաններում հարց է առաջանում իւրաքանչիւր ամուսնացող զոյգի համար, թէ արդեօք պէտք է երեխաներ ունենալ ըստ ցանկութեան, թէ այսպիսի մի մեծ խնդրի մէջ պէտք է լինել հլու հպատակ բնութեան ցանկութեան և կամ «ճակատագրի» կոյր հասկացողութեան:

Հարցը պարզ է. պարզ է այն հասկանալի պատճառով, որ ամեն մի քիչ թէ շատ կրթուած, քիչ թէ շատ ինտելլիգենտ մարդ պէտք է հաշիւտայ իւր բոլոր արարմունքների համար, իսկ մեծ՝ կարգինալ հարցերում պէտք է աւելի ծանրակշիռ լինել և չյափշտակել ներկայ մօմենտի, տրամադրութեան և ցանկութեան թելադրութեամբ, այլ աւելի հեռուն գնալ, ապագան աչքի առաջ պատկերացնել:

Որդէծնութեան հարցը կարգինալ հարց լինելով, պէտք է միշտ լաւ քննութեան առնել՝ ամուսնանալով պէտք է հարց տանք մեզ, թէ արդեօք եթէ երեխաներ ունենանք, կարո՞ղ ենք նրանց կերակրել, կրթել, ուսում տալ և հասարակութեան պիտանի անդամ դարձնել և այլն:

Թէ՛ այս բոլոր խնդիրներին երկրորդական ու երրորդական տեղ տալով՝ և աշխարհ բերել մի շարք երեխաներ, առաջնորդուելով նախ այն պրօբլէմով, թէ Աստուծոյ տուածն է, Ինքն էլ կը պահէ և կամ հինաւուրց խօսքերով թէ բազմացէք և լըցրէք աշխարհը...

Որպէսզի աւելի լաւ հասկանալի լինի մեզ ներկայ աշխատութիւնը, վերցնենք և քննենք որդեծնութեան հարցը Ֆրանսիայում:

Սոսկալի պատկեր... Ֆրանսիան մահանում է... անհաճախական հրապարակախօսների ամենօրեայ սարսափահար բացականչութիւնները: Փարիզի, գիտութեան այդ գեղեցիկ տաճարի, քաղաքակրթութեան բարձր որրանի սիրուն մթնոլորտը այլասերւում է: Փարիզը դարձած է միայն հասակաւորների միջավայր, իսկ երեխաներ այնտեղ համարեայ գոյութիւն չունեն: Այնտեղ ինչպէս հարուստ բուրժուան, նոյնպէս և ինտելիգէնտ արխատօկրատն երեխաներ չունին և կամ սահմանափակում են մէկ զաւակով, շատ սակաւ երկուսով:

Արխատօկրատիայի և բուրժուայի փափկատուն սեռը՝ ժպտերես և կենսուրախ փարիզուհին, ամօթ, ծաղր ու ծանակ է համարում երեխաներ ունենալը, նրանց հետ կապուե՞նք և կամ գտնում է անճոռնի և անէստէտիք, լինել ոչ «նօրմալ» յղի դրութեան սէջ. նրանց հետաքրքրում է գիշերային ժիւղ-ֆիքսերը, ճոխ սեղանները. իսկ լինել մայր, տալ հայրենիքին պիտանի անդամներ, այդ մասին բոլորովին չի էլ մըտածում Փարիզի բարձր դասակարգի կիներ: Ահա թէ ինչո՞ւ կենտրոնական Փարիզի սքանչելագործ

հրապարակները, գեղեցիկ ծաղկոցները ու ծառաստանները զուրկ են երեխաներից:

Թողնենք մի ըոպէ Փարիզի հարուստ, բուրժուայ դասակարգի թաղերն և անցնենք դէպի նրա արուարձաններն և ապա դառնանք դժբախտների վերջին հրաժեշտի օթևանը, հոչակաւոր մօրգը:

Պրօլէտարիատի այս աղքատ թաղերում, փոշու և կեղտոտութեան մէջ թափթփուած են թուլակազմ և հիւանդոտ երեխաներ. այստեղ Փարիզի կենտրոնի հակապատկերն է՝ իւրաքանչիւր ընտանիքում աղքատութեան մէջ տառապում են մի շարք իրար յետևից աշխարհ եկած անգօր, թուլակազմ երեխաներ, որոնք թողնուած են ճակատագրին: Այստեղ են անվերջ հիւանդութիւնները, այստեղ են թոքախտն ու վնեւրական կործանիչ ախտերը:

Հիւանդ մայրն իւր բազմաթիւ որդիներով կիսաքաղցած սպասում է իւր ամուսնու՝ ընտանիքի միակ աշխատաւորի երեկոյեան վերադարձին:

Ահա և նա՛ յոգնած աշխատաւորը, իւր մի քանի գրոշներով, ամբողջ օրը ցեխի կամ մուրի մէջ աշխատելուց յետոյ իւր բազմանդամ ընտանիքում. որքան էլ նա ցանկանայ բարւոքելու իւր դրութիւնը, իւր աղքատիկ ու տառապեալ կացութիւնը, նա չի կարող, որովհետև դժբախտ է, աղքատութեան մէջ տառապում է, դժբախտ է, որովհետև անկիրթ է, իսկ անկիրթ է, որովհետև իւր ծնողներն էլ աղքատ են եղել և կըթուլիւն տալու հնարաւորութիւն չեն ունեցել... Իսկ ի՞նչ պէտք է լինի այս նոր սերուն-

դի, թշուառ փողբրիկների դրուժիւնը պարզ է։ չըստանալով ոչ մի կըթուժիւն չունենալով ապ-
 րուստի միջոցներ, չկարողանալով գոհացում
 տալ իրենց ստամոքսի պահանջին, և վերջապէս
 զրկուած լինելով դաստիարակութիւնից, ապու-
 դայում մնում է միայն մի ճանապարհ— դիմել
 անազնիւ միջոցների, օրուայ պարէնը հայ-
 թայթելու համար. անհայտեղ առաջ պիտի
 գայ գողութիւն, աւագակութիւն... և իրօք ար-
 գէտ և քաղցած երիտասարդը չըգտնելով աշխա-
 տանքի աղբիւր, չունենալով պաշտօն, ստիպ-
 ւած է դիմելու վերոյիշեալ անազնիւ միջոց-
 ներին։

Իսկ անուս և անդաստիարակ աղջկերքը,
 նոյն պատճառներով ստիպուած են զիջելու ու-
 նևորների պահանջներին, իրենց մարմինը ծա-
 խելով, այսօր մէկին, վաղը միւսին, մինչև որ
 «հեշտ աշխատանքի» սովորած փողոցի այդ սոս-
 կալի կեանքը բոլորովին իւր գիրկը կառնէ և
 ճակատներին «անառակ» անունը կը դրոշմէ.
 բայց այս բոլորը երկար չեն տևիլ և անա աւա-
 գակների շարքն ընկած երիտասարդը, իր յան-
 ցանքների համար կամ բանտերի փականքների
 տակ կը կորչի և կամ յուսահատուած կեանքի
 դառնութիւնից իրեն Սենայի անկուշտ ալիքնե-
 րի մէջը կը նետէ. իսկ «հեշտ աշխատանքի» սո-
 վորած աղջիկը, տարիների ընթացքում տարա-
 ծելով այս ու այն կողմը վեներական գանազան
 ախտեր, և, վերջ ի վերջոյ կորցնելով իւր ար-
 տաքին գեղեցկութիւնն ու այլևս չկարողանալով
 մրցել իւր նոր ընկերակիցների հետ, դարձեալ
 իւր եղբօր յետևից պէտք է Սենայի մէջը նե-
 տուէ։

Մտէք այժմ մի ըոպէ տխրահոշակ Մօրգը,
 անյայտ անձնասպանների հրաժեշտի վերջին շի-
 նութիւնը և դուք ամեն օր կըտեսնէք նոր-նոր
 դիակների շարքեր ապակէ դագաղների մէջ ի
 ցոյց դրուած։ Ահա այստեղ մարդ աւամայ մը-
 տածում է՝ ո՞վ կամ ինչն է պատճառն այսքան
 անձնասպանութիւնների։ Պատճառը դաստիա-
 րակութեան և կըթուժեան բացակայութիւնն է և
 եթէ մի ըոպէ աչքի անց կացնենք ստատիստի-
 կան, դուք կըտեսնէք, որ այդ անձնասպանների
 ամենամեծ տոկոսը ընկնում է անտէր ու խեղճ,
 աղքատութեան մէջ տառապող, քաղցածների
 վրայ, որոնք աշխարհ գալով ոչ կանոնաւոր
 դաստիարակութիւն, ոչ կըթուժիւն և ոչ էլ ապ-
 րուստի միջոց են ստացել իրենց ծնողներից,
 իսկ կեանքի կուռում՝ կոնկուրենցիայի մէջ յազ-
 թուող հանդիսանալով՝ մնացել է միայն անձնաս-
 պանութեան դիմել. իսկ այդ ծնողները չեն նա-
 խատեսել, նրանք ըոպէի ազդեցութեան տակ,
 աշխարհ են բերել մի շարք երեխաներ և իրենց
 անծայր չքաւորութեան պատճառով չեն մտա-
 ծել դրանց ապագայի համար, այլ թողել են
 ճակատագրի բախտին ասելով թէ «Աստուծոյ տը-
 ւածն է, Ինքն էլ կը պահէ»։

Նոյն պատկերն են ներկայացնում Եւրոպա-
 յի ուրիշ կենտրոնատեղիները՝ հարուստ բուր-
 ժուան չի ուզում աւելի քան մի կամ ամենա-
 շատը երկու երեխայ ունենալ, որպէսզի իւր
 հարստութիւնը չբաժանուի շատ երեխաների մէջ
 մի քանի մասերի, իսկ այդ նոյն բարձր դասա-
 կարգի կանայք չըցանկանալով իրենց կապել ե-
 րեխաների հոգսերի հետ, այլ ամբողջովին նը-

ւիրուելով իրենց մարմնի գեղեցկութեան, նախազգուշական միջոցներ են ձեռք առնում յղիութեան դէմ. իսկ չքաւորները, չիսանալով հակաբեղմնաւորական միջոցներն և կամ չքաւորութեան պատճառով հնարաւորութիւն չունենալով օգտւելու այդ միջոցներից, տարէց տարի աշխարհ են բերում նոր-նոր էակներ, առանց դրա համար բարոյական իրաւունք ունենալու: Բայց ահա Փրանսիացի ազգասէր մեծ հրապարակախօսը, գոռում, գոչում է թէ Փրանսիան մահանում է... նա չէ աճում, նա այլասերում է: Այո, մահանում է, այլասերում է և դրա պատճառն ո՛չ թէ ամբողջ Փրանսիայի ժողովուրդն է այլ միմիայն հարուստ և միջին դասակարգը, որոնք կարող էին ունենալ աւելի քան մի կամ երկու երեխայ, ունենալով միջոցներ նրանց կրթելու, դաստիարակելու և հետեապէս պիտանի անդամ դարձնելու թէ հայրենիքի և թէ պետութեան համար:

Հարուստը, ինչպէս ասացինք, չի ուզում որ իւր հարստութիւնը բաժանուի, նա ուզում է, որ իւր միակ որդին ժառանգէ իր ունեցածը. նրան ի՞նչ, թէ հայրենիքն ընկնում է և կամ պատերազմի ժամանակ անհրաժեշտ է գիտակից զօրք, թշնամու դէմ յաղթութիւն տանելու համար. հոգ չէ այդ, որովհետև դրա համար կայ մի այլ դասակարգ, որը ճիշտ է հիւժուում է չքաւորութեան մէջ, բայց հարկաւոր դէպքում նա կարող է տալ պահանջուող ոյժը, պատերազմի դաշտն արիւնտով, իսկ բազմաշատ ընտանիքի անդամներին արցունքով յեղյեղելու համար:

Ահա այսպիսի աննօրմալ դրութիւնից առաջ

է գալիս չքաւորների բազմացումն, իսկ հարուստների և միջին դասակարգի պակասումն և եթէ սրա վրայ աւելացնենք նաև օր-օրի վրայ աճող թանգութիւնը, թէ մթերքների, թէ բնակարանների և թէ այլ պիտոյքների, այն ժամանակ կստացուի ներկայ անմխիթար դրութիւն՝ իսկ ապագայում ո՞վ գիտէ թէ ի՞նչ սարսափելի դրութիւն պիտի ստեղծուի:

Այո նոյն պայմանների մէջ էր, երբ 18-րդ դարում անգլիացի հռչակաւոր գիտնական Բօբերա Մալթուսը ցոյց տուեց, թէ ի՞նչպէս ժողովուրդն աճում է երկրաշափական պրօգրէսով, այսինքն մէկից երկուս, երկուսից չորս, չորսից ութ, 16, 32 և այլն, այն ինչ ապրուստի միջոցները թուաբանական պրօգրէսով են աճում, այսինքն մէկից երկուս, երեք, չորս, 5, 6 և այլն:

Ճիշտ է, Մալթուսն իւր բերած օրինակով, այսինքն արդիւնաբերութեան զարգացման և ժողովրդի բազմացման յարաբերութեամբ, ղեռ ևս չէր տուել ժամանակի իսկական դրութիւնը, բայց որ Մալթուսը ճշմարտութիւնն է գրի առել, տալով մեզ որդեճնութեան հարցում ուղիղ հասկացողութիւն այդ իրողութիւն է:

Մալթուսի խօսքերին թէ «Մարդ չպէտք է աշխատի բերել աւելի երեխաներ, քան իւր ուժերը ներում են. նրանց կերակրելը, մեծացնելը», պէտք է աւելացնել և ղեռ էլ աւելի հեռուն ի նկատի առնել, որովհետև միայն կերակրելը ղեռ բաւական չէ, անհրաժեշտ է երեխային դաստիարակել, կրթել, գոնէ որոշ աստիճանի ուսում տալ ու դարձնել նրան ուժեղ զինուոր ներկայ կեանքի փոթորկալից կռուի համար: Ով որ այս

անել կարող է, նա թող ունենայ երեխաներ, նա թող սերունդ առաջացնող հանդիսանայ, որովհետև մարդկային պարտականութիւնը միայն երեխաներ առաջ բերելու մէջ չէ, գա շատ քիչ է, գրա հետ միասին, այդ աշխարհ եկող մանկանը պէտք է բարիքներ տալ, կեանքի քաղցրութեանը, բերկրանքին մասնակից անել և ոչ թէ փշոտ ճանապարհի, դառն պտուղներին ենթարկել:

Մի ժամանակ այս հարցով զբաղւող մեծ գիտնականներից ոմանք առաջարկեցին երիտասարդներին ամուսնանալ այնպիսի հասակում, երբ նրանք նիւթականապէս ապահովւած են ընտանիք պահելու համար: Անշուշտ, այդ հեղինակաւոր անձնաւորութիւններն ի նկատի ունէին այդպիսով սեռական կեանքը բնական—նօրմալ դարձնելու, այսինքն, ամուսնացողները՝ նիւթականապէս ապահովուած լինելով՝ ստիպուած չլինեն զանազան հակաբեղմնաւորական միջոցների դիմելու: Այս վարդապետութեան գլխաւորներից մէկը դարձեալ հանդիսանում է Բօբէրտ Մալթուսը, որը՝ ապրելով 18-րդ դարում, ամուսնանալու համար ժամանակ դրաւ 25 տարեկան հասակը: Այս տարիքը իրօք բժշկական տեսակէտից հանդիսանում է իբրև սեռական հասունութեան ժամանակ. բայց ասացէք, խնդրեմ, այդ ո՞րն է ներկայ դարի երիտասարդներից 25 տարեկան հասակում այնքան ապահովուած, որ կարողանայ ամուսնանալ և ընտանիք պահել: Անցան 18-դ, 19-դ դարերը, թեւակոխեց 20-րդ դարն, իւր կեանքի սուղ և բազմակողմանի պահանջներով. պահանջներ, որոնց բաւականութիւն տալու հա-

մար ոչ թէ 25, այլ 35 տարեկան հասակը միայն գուցէ թոյլատրի. ես դեռ չեմ խօսում բարձրագոյն կրթութիւն ստացողների համար, որոնք սովորաբար աւարտում են 26—27 տարեկան հասակում կամ շատ անգամ էլ ուշ, իսկ այնուհետև նրանց անհրաժեշտ է էլի 4—5 տարի իրենց մասնագիտութեան մէջ փորձուելու և յետոյ միայն քիչ ու շատ վայելելու աշխատանքի պտուղները: Այսպիսով ուրեմն մենք ապրելով ոչ թէ 18-դ, այլ 20-դ դարում, պէտք է Մալթուսի տուած 25 տարին հասցնենք 35-ի, իսկ ապագայում 40-ի և գուցէ էլ աւելի...

1003
10184

Բայց միթէ հնարաւոր է մի առողջ երիտասարդից պահանջել չամուսնանալ մինչև 35—40 տարեկան հասակն և դրա հետ միասին նրան ստիպել ժուժկալ կեանք վարելու, խոյս տալով զանազան ծախու մարմիններից... Սա անհնարին է և մենք կարող ենք պնդել, որ նման պահանջը միայն մի ուղի ցոյց կը տայ երիտասարդութեանը՝ դէպի փողոցի աղջկերքը, որոնք՝ իրենց մարմինը ծախելով՝ միաժամանակ իրենց այդ կլիէնտներին վեներական ախտերով պէտք է հիւրասիրեն:

Մալթուսի և նման քարոզիչների թէօրիան այսօր էլ շատ է տարածուած: Քիչ չեն մեզանում 35—40 տարեկան չամուսնացած պարոնների թիւը. բայց և այդ դասակարգն է, որ նեցուկ է հանդիսանում պրօստիտուցիայի տարածման:

Սեռական հասունութեան հասած առողջ տղամարդը չկարողանալով գսպել իւր բնական պահանջները, դիմում է փողոցի շրջիկ աղ-



ջիկներին. այստեղ նա ազատ է իւր բոլոր արարմունքների մէջ, այստեղ նա կապուում չէ մշտականապէս նրան պահելու, կերակրելու հոգսով և ոչ էլ պատասխանատու է նրա յղիանալուն:

Բայց միթէ Մալթոսի փափագածը սրանով իրագործուում է. միթէ պարզ չէ, որ այս ուշ ամուսնացողներն (կամ ընդմիշտ չամուսնացողներն) են պրօստիտուցիայի զարկ տուողներն և եթէ տարէց տարի, ինչպէս այդ ստատիստիկան է ցոյց տալիս, պրօստիտուտկաների թիւը շատանում է, դա պարզ ապացոյց է, որ զգացուում է դրանց պահանջը, իսկ ստիպել 35—40 տարեկան երիտասարդներին ամուրի և միաժամանակ ժուժկալ մնալ, դա անկարելի է—հետեւապէս արսուրդ:

Այսպիսով Եւոեմն Մալթոսի տուած դասը՝ ուշ ամուսնացողներն, որոնք անկէտից, աղքատութեան դէմ կռուելու են, այնքան էլ նպատակայարմար չէ, որովհետեւ ինչպէս դիտէք, պրօստիտուցիայի և դրա հետ միասին վեներական հիւանդութիւնների տարածումն աւելի սոսկալի է, քան չքաւորութիւնը. ապա եթէ այդպէս է ինչ անել:

19-դ դարում, Մալթոսին հետևողները, պարզ նկատում էին իրենց վարդապետութեան անիրագործելի և աննպատակայարմար լինելը, դրա համար էլ առաջ անցան նոր լօզուներ, որով և հիմք դրուեց նոր Մալթոսականութեան (նէօմալթոզիանիզմ), Անգլիացի գիտնական Զօն Ստիւարտ Միլլն և ապա նամանաւանդ Ֆրէնսիս Պլէշը, որը և նոր Մալթոսականու-

թեան իսկական հիմնադիրն է ընդունուում, ուժգին կերպով զարկ տուին նոր վարդապետութեանը, առաջարկելով ամուսնանալ ժամանակին, բայց եթէ որևէ պատճառով ամուսնացողները չեն ցանկանում երեխաներ ունենալ կամ նրանցով ծանրաբեռնուել, այդ դէպքում գործադրուին զանազան հակաբեղմնաւորական կամ նախագուշական միջոցներ,

Այսպիսով ուրեմն նոր վարդապետութիւնը մի կողմից չէր ստիպում հասունացած տղամարդուն ամուրի կեանք վարելու և իւր սեռական պահանջի դէմ կռիւ մղելու, իսկ միւս կողմից պահասում է պրօստիտուցիայի մի գլխաւոր նեցուկը, որով և անշուշտ պրօստիտուցիան կը թուլանար և հետեւապէս վեներական ախտերը չէին ընդունիլ այն լայն չափերը, ինչ որ կլինէր պրօստիտուցիայի ուժեղ տարածուած լինելու դէպքում:

Նոր վարդապետութիւնը շուտով մեծ ընդունելութիւն է գտնում Եւրոպայի բոլոր պետութիւնների մէջ. ոչ միայն բժիշկները, իրաւաբանները կամ էկօնօմիօսները, այլ և բարոյախօսներն (մօրալիստները) ընդունում էին հակաբեղմնաւորական միջոցների գործադրութիւնը, որովհետեւ դրա մէջ նրանք չէին գրտնում անբարոյական ոչինչ. եթէ եղաւ մէկը, որ պայքար մղեց նոր-մալթոսականութեան դէմ գա Գերմանիայում սօց.-դեմօկրատների գլխաւոր՝ Ա. Բէբէլն էր, որը ժողովրդի աճման՝ խիստ բազմացման մէջ, գտնում էր ապագայ յաղթութեան գրաւականը, որից ոչ գեմօկրատիկ կարգերի դէմ:

Բէբէլի այդ դատողութեան դէմ դուրս եկան ուրիշ գիտնականներ, որոնք պարզաբանելով, ստատիստիկայով ցոյց տուին, որ ամենախիստ սերունդ արտադրողը չքաւոր դասակարգը լինելով, ուրեմն և ամենից շատ պէտք է բազմանան ո՛չ թէ բանիմաց ու գիտակից աշխատաւորները կամ բանուորները, որին Բէբէլը փափագում էր, այլ խեղճ ու կրակ օրուայ ճաշին կարօտ աղքատները, որոնցից միմիայն ինչպէս վերն էլ յիշեցի, անծայր և աղքատութեան պատճառով ուրիշների հաշուով ապրող աւագակներ ու (պարագլխներ) գողեր պէտք է աւելացնենք, որոնք ոչ միայն կը նպաստեն բանուորական հարցին, այլ ընդհակառակը խոչնդոտ կը հանդիսանան բանիմաց պրօլէտարիատի պահանջներին: Պրօֆ. Յօրէլը հերքելով Բէբէլի այդ վարդապետութիւնը, յիշեցնում է Չինաստանն իւր բուն ազգաբնակչութեամբ, բայց ուր է այդ բազմամարդ, կարիքների մէջ մինչև կողորդ ընկղմուած երկրի ոյժը. ո՛չ պարոններ, մեզ հարկաւոր չեն այդպիսի առատ պտղաբերութիւն, որպիսին Չինաստանն ունի, յաղթութիւնը ոչ թէ գօրքի բազմութիւնիցն է կախուած, այլ նրա որակից, որին իրրև փաստ կարող են ծառայել վերջին պատմական եղելութիւնները:

Ուրեմն ամուսինների բարոյական պարտքը կայանում է ոչ թէ միայն առատ սերունդ առաջացնելու մէջ, այլ գիտակից և օգտակար քաղաքացիներ տալու և հետևապէս սեռական ախտը չպէտք է միայն բոլորական բաւականութեան ակտ լինի, այլ պէտք է նախատեսնէ ապագան. երիտասարդ ամուսինները պէտք է մը-

տածեն, որ այդ ակտի հեռանքը պէտք է լինի նոր էակ, նոր կեանք և ինչպէս դր. Բրէդիսն է նկատում, ծնողները պէտք է նախ քան երեխաներ աշխարհ բերելը, մտածեն՝ թէ արդեօք կարո՞ղ են այդ անմեղ աշխարհ բերած փոքրիկներին կերակրել, կրթել, դաստիարակել, թէ՞ չէ: Կլուն ձու դնելով ուրիշ թուշուանների բների մէջ, նա չէ մտածում այդ ձուերից դուրս գալիք ապագայ թուշիկների համար, բայց մենք մարդիքս կկուներ չենք...

19-դ դարում նոր-Մալթոսականութեան յարեցին համարեայ բոլոր ժամանակի այդ հարցով հետաքրքրուողները. նրանք արդարացի կերպով գտնում էին, որ հակաբեղմնաւորական միջոցները համարեա միշտ անհրաժեշտ են իւրաքանչիւր ընտանիքում: Միւնսէնի յայտնի գիտնական Կրուբէրը պարզ կերպով ցոյց տուեց, որ համարեա բոլոր ընտանիքներում վրայ է հասնում մի ժամանակ, երբ անհրաժեշտ է հակաբեղմնաւորական միջոցների գործադրութիւնը, որովհետև այդ պահանջում են ոչ միայն տնտեսական պայմանները, այլ և կնոջ Ֆիզիքական կազմը՝ առողջութիւնը:

Շատ ընտանիքներում քանի որ երեխաների թիւը սահմանափակ է, նրանց ծնողները հեշտութեամբ են կերակրում, ուսում տալիս, բայց երբ այդ երեխաների թիւը անցնում է որոշ սահմանից, որը դժուար է որոշել, այն ժամանակ արդէն ընտանիքն իւր անդամներով դէպի կորուստն է դիմում, առաջ են գալիս վտիտ, թուլակազմ, հիւանդոտ երեխաներ, որոնց առողջութեան համար պահանջում է աւելի մեծ

լնամք, որպիսին ընտանիքի մայրը՝ ծանրաբեռնուած լինելով հոգսերով՝ չի կարողանում տանել, հետևապէս այստեղ արդէն անհնար է գտնում կարգապահութեան, մաքրութեան և կրթման վրայ հսկելն և ընտանիքի մէջ բուն են դնում մի կողմից զանազան հիւանդութիւններ, իսկ միւս կողմից անդաստիարակութիւնը՝ վատ հակումները կամ արատները:

Կան և ուրիշ շատ հիմունքներ, որոնք պահանջում են առանձին անհատներից ժամանակակաւորապէս կամ ընդմիջատ խոյս տալու որդեծնութիւնից:

Եւ իրօք, ով չէ ծանօթ այն բոլոր կուրսաբեր հետեանքների հետ, որ առաջ են բերում գինեմոլութիւնը, սիֆիլիսն և թոքախտը ժառանգականութեան օրէնքով:

Բաւական է մեզ եթէ յիշենք այն վնասները, որ հասցնում է մեզ ալկօհօլը. օդու կամ գինու առատ գործածութիւնն սչ միայն իրեն գործածողին է վնասում ու քայքայում առողջութիւնը ֆիզիքապէս և մտաւորապէս, այլ և ժառանգականութեան շնորհիւ այդ քայքայումը՝ հիւանդագին դրութեան է հասցնում նրանց ապագայ սերնդին՝ որդիներին, թոռներին և այլն:

Ահա և Միսօրի, յայտնի հակաալկօհօլական պրօպագանդիստի օրինակը, որտեղ պարզ կերպով երևում է այդ աղէտաբեր արատի կործանիչ լինելը:

Ադա Ուիկէ անուն յայտնի թափառական գինեմոլ և միաժամանակ աւագակ մի ամերիկացի, որ ծնուել էր 1740 թուին և ապրում էր մինչև 19-դ դարի սկզբները, առաջ է բերած

սերունդ 830 հոգուց, որոնցից 709 հոգու մասին ունինք հետեւեալ մանրակրկիտ տեղեկութիւնը: Նրանց մէջ եղել են.

- 106 ամուրիներ,
- 181 պրօստիտուտականեր,
- 142 մուրացիկներ,
- 64 անկելանոցներում ապրողներ,
- 76 յանցագործներ, (գրանցից 7 մարդասպաններ են եղած):

Համարեայ բոլորն էլ քիչ ու շատ գինեմոլներ են եղած, եթէ հաշուենք այդ մեծ ընտանիքի անդամների բանտում անց կացրած ժամանակը, դուրս կգայ 116 տարի, իսկ հասարակական ծախքերով նրանք ապրել են 734 տարի 5-դ սերունդի համարեա բոլոր կանայք պրօստիտուտականեր են եղած, իսկ տղամարդիկ յանցագործներ:

Այդ ընտանիքը կառավարութեան 75 տարուայ ընթացքում, հաշուելով այն բոլոր ծախսերը, որ արուած են դրանց բանտերում պահելու համար, մուրացիկներին օգնելու և ընդհանրապէս նրանց տուած վնասները կառավարութեան, նստել է 5 միլլիօն մարկ:

Նոյն կորստաբեր հետեանքն ունեն սիֆիլիսը, թոքախտը և մի քանի այլ հիւանդութիւններ, որոնց պատճառով անհրաժեշտ է հակաբեղմնաւորական (նոյնպէս հակավարակիչ) միջոցների գործածութիւնը:

Որդեծնութեան չափաւորումն՝ սահմանափակումն ինչպէս վերն էլ յիշեցինք՝ պահանջում է և կնոջ առողջութիւնը:

Գիտական անվերջ փորձերն ու քննութիւ-

նը ցոյց են տալիս, որ խիստ վնասակար ազդեցութիւն է անում յաճախակի որդեծնութիւնը կնոջ առողջութեան վրայ: Միջին և նամանականդ չունեւոր դասակարգի կանայք, նիւթականապէս անապահով վիճակի մէջ լինելով և ծանրաբեռնուելով բազմանդամ ընտանիքով, ենթարկում են սովորաբար շղային և հիստերիքական հիւանդութեան: Տարէց-տարի պարբերաբար ծնելով երեխաներ և տանելով միաժամանակ ընտանիքի հոգսի ծանրութիւնն իրենց վրայ, առանց դայեակների և աղախիների, նըրանք բոլորովին թուլանում են, ուժգին կերպով վնասելով շղային հիւստեանքի ամբողջ կազմը, միաժամանակ և ծննդաբեր օրգանը՝ հնարաւորութիւն չունենալով հանգստանալու և նախնական նօրմալ դրութեան գալու, նոյնպէս հիւանդանում է և ստացւում են այնքան շատ տարածւած գանազան կանացի հիւանդութիւններ:

Բացի վերոյիշեալ պատճառներից շատ յաճախ բժիշկը ստիպուած է լինում այս կամ այն կնոջը խորհուրդ տալ խոյս տալու յղիութիւնից: Այսպիսի դէպքերում յղիութիւնից խոյս տալու ամենալաւ միջոցն կլինէր ժուժկալութիւնը, բայց կեանքի մէջ եղած օրինակները գալիս են համոզելու բժշկին, որ նման խորհուրդը, ինչպէս ժուժկալութիւնը, բոլորովին անելորդ է, քանի որ այդպիսի դէպքերում նրանք չեն կատարում բժշկի տուած խորհուրդն և վերջապէս կարիք էլ չկայ ժուժկալութիւն պահանջել այն երիտասարդ ամուսիններից, որոնք կարող են անելի հեշտութեամբ գործադրել հակաբեղմնաւորական միջոցներ: Վերջապէս հակաբեղմնաւորական մի-

ջոցների կարիքը զգացւում է և մի շարք հիւանդութիւնների ժամանակ, որոնք ճիշտ է թոյլ չեն տալիս կնոջը յղիանայ ու երեխայ ծնել, բայց միաժամանակ այդ հիւանդութիւնները չեն խանգարում պսակուել և ապրել ինչպէս ամուսիններ. այդպիսի հիւանդութիւնների կարգին պէտք է վերագրել երիկամունքների խրօնիքական բորբոքումն, կոնքի անկանոնութիւնը, կանացի կրծքերի յետամնացութիւնը (փոքր մընայլը), խիստ առաջ գնացող պակասարիւնութիւնը, վեներական հիւանդութիւններ, արզանդի գանազան հիւանդութիւններ և այլն. իսկ զինեմօլները, թոքախտաւորներն և սիֆիլիսիկները, որ անպայման պէտք է գործադրեն հակաբեղմնաւորական միջոցներ, կամ պէտք է խոյս տան սեռական յարաբերութիւնից, այդ պահանջը միանգամայն իրաւացի է, որովհետև ոչ մէկը մեզնից չունի ոչ իրաւական և ոչ բարոյական իրաւունք, ծնել՝ աշխարհ բերել թոյլ, հիւանդութեան մէջ տառապող մի խեղճ հիւանդոտ էակ:

Ըստ պրօֆ. Ֆօրէլի, բժիշկը նոյնիսկ խոչընդոտ պէտք է հանդիսանայ, թոքախտաւորներին, թերակատար բժշկուած սիֆիլիսոտներին կամ սուսանակով հիւանդներին և կամ հոգեկան հիւանդներին ամուսնանալու:

Հակաբեղմնաւորական միջոցների գործադրութեամբ—ինչպէս տեսնում ենք հնարաւորութիւն է տրւում հիւանդոտներին վարել սեռական կեանք առանց ռիսկի, աշխարհը լցնելու անգամալոյծներով և ապուշներով:

Միւս կողմից էլ երիտասարդները հնարաւորութիւն կունենան ժամանակին ամուսնանա-

լու, առանց վախենալու բազմաթիւ սերնդի կերակրելու, խնամելու հոգսից և այսպիսով գոնէ որոշ չափով կը պակասեն այն բազմաթիւ գէշաքերը, երբ շահէլ աղջիկները ստիպուած չեն լինիլ ամուսնանալու ծերութեան գուռը հասած տղամարդկանց հետ, որոնք ճիշտ է, այդ ժամանակ ապահովուած են լինում նիւթականապէս, բայց դրա հետ միասին կորցրած են լինում և իրենց թարմութիւնը ամուրիութեան ժամանակ:

Այսպիսով ուրեմն այժմ պարզ է հակաբեղմնաւորական միջոցների անհրաժեշտութիւնը որոշ գէտքերում, որը թոյլատրուում է և օրէնքով հակառակ անթոյլատրելի վիժմանը:

Գերմանիայում օրէնքով պատժուում են նոյն իսկ նրանք, որոնք փորձում են վիժում առաջ բերելու: Գերմանական օրէնսդրութիւնը, նոյնպէս շատ ուրիշ պետութիւններ ամեն միջոցներ ձեռք են առնում պատժելու վիժում առաջացնողին. այս բանը շատ պարզ է և իրաւացի, քանի որ ինչպէս գիտենք, վիժումն շատ յաճախ վտանգի է ենթարկում մօր կեանքը. բայց սրա հետ միասին չպէտք է մոռանալ, որ եթէ օրէնքը յանուն մօր անձի առողջութեան, պաշտպանում է արգանդում եղած երեխայի կեանքը, այդ գէտքում յանուն այդ նոյն օրէնքի՝ կառավարութիւնները պէտք է աշխատեն ոչնչացնելու վիժում առաջացնելու գլխաւոր սօցիալական պատճառներն ևս, պէտք է վերջ տան հէնց իրենց պարսաւանքին՝ անպսակ մայրերի և ընդհանրապէս պէտք է բարւոքել մայրերի սօցիալական պայմանները (ապաստանարան մայ-

րերի և յղիների, ապահովագրութիւն մայրերի և այլն):

Զարմանալի կերպով օրէնքը ինքն իրեն հակասում է, ինչպէս այդ դիտում է Շտրայտբէրգը ըստ գերմանական օրինաց (§ 218 Die Reichs-straf-gesetzgebung u. neue Beleuchtung, Oranienburg 1914). ապօրինի յղութիւնը նկատուած է ինչպէս մեղք և անարգանք, բայց միևնոյն ժամանակ այդ նոյն սաղմի կեանքը ապօրինի մօր արգանդում ընդունուում է սրբազան իսկ այդ նոյն ծնունդ երեխայի կեանքը դարձեալ ենթարկուում է ծաղր ու ծանակի ինչպէս ապօրինի զաւակ: Սա արդէն հակասութիւն է, եթէ մենք գիտենք մօր արգանդում ապօրինի յղիացած երեխային պաշտպանել, ասել է ծնունդուց յետոյ ևս առաւել պէտք է շարունակենք պաշտպանել և ոչ թէ ծաղր ու ծանակի ենթարկել:

Մենք խորապէս համոզուած ենք, որ պատժի պէտք է ենթարկուեն այն բոլոր անձնաւորութիւնները, որ բժշկութիւնը դարձրել են մի տեսակ «փեշակ» միայն հարստանալու համար, նամանաւանդ երբ զանազան տիպիկ յայտարարութիւններով այդ «փեշակաւորները» յայտնում են իրենց պատրաստակամութիւնն օգնելու կամ աւելի պարզ՝ ընդհատելու բեղմնաւորուած սաղմի զարգացումն: Պետութիւնների օրինաց զրքերը գալիս են պաշտպանելու մօր արգանդում գտնուող սաղմի կեանքը, հակառակ դիպուածում սաղմին փոսա հասցնողները պատժուում են վերոյիշեալ օրէնքներով, իրաւազուրկ լինելով և այլն. խիստ պատժի է ենթարկուում նոյնպէս

յղի կիներ, երբ նա վիժում է առաջացնում, յղիութիւնից ազատուելու համար. որ «փեշա-կաւոր» վիժում անողներին դատելը արդարացի է, դրան բացասել անկարելի է, բայց որ մօր վերաբերմամբ օրէնքները այդքան խիստ են, դա դեռ կասկածելի է: Ինչպէս գիտենք իրա-ւաբանօրէն մարդկային իրաւունքներն սկսում են ծնուելուց անմիջապէս, իսկ թէ արգանդում գտնուող սաղմը պէտք է օգտուի որոշ իրաւունք-ներից, դա բաւական բարդ խնդիր է, իսկ մօր վե-րաբերմամբ պէտք է ասել, որ պետութիւնների օ-րէնքներն աւելի քան խիստ են: Եւ իրօք միթէ քիչ են այն դէպքերը, երբ նահապետական, մաքուր ընտանիքի պարկեշտ-աղջիկը հակառակ իւր ցան-կութեան ենթարկուել է առեւտրման և բռնա-բարման, որին հետեւել է յղիացումն և կամ այդ նոյն պարկեշտ աղջիկը հակառակ իւր խոր հա-մողմունքներին, ըոպէի ազդեցութեան տակ խաբուել է սիրա՞ երիտասարդից, անձնատուր լինելով նրան, բայց որը յանկարծ խաբող է հանդիսացել և իւր ըոպէական կրքերին բաւա-կանութիւն տալուց յետոյ թողել, հեռացել է անդառնալի կերպով, իսկ խեղճ աղջկին՝ ար-ցունքն աչերին, սիրտը կծկուած՝ թողել, է հա-սարակութեան անողոք կարծիքին, խօսակցու-թեան նիւթ, ծաղր ու ծանակի առարկայ. մի-թէ այսպիսի դէպքում այդքան խիստ դատա-պարտման պէտք է ենթարկուի խեղճ կինը և միթէ չպէտք է նա ազատուի, հակառակ իւր ցանկութեան իրեն կապած էակից. նոյնը կա-րող է լինել և բժիշկների հետ. և շատ անգամ ազնիւ բժիշկը մնում է երկու սրերի մէջ տեղը՝

մի կողմից ընտանիքի, երբեմն պարկեշտ կոչուած, բայց հակառակ իւր ցանկութեան յղիացած աղ-ջիկն իւր ազանքով ու աղի արցունքներով խնդրում է նրան օգնել, ազատել ծաղրի առար-կայ, նշաւակ լինելուց, իսկ միւս կողմից օրէնքն է խօսում իւր հուժկու յօդուածներով:

Ահա այստեղ խնդիրը բարդ է, մեր խղճի առաջն է դրուած կշիռը, որի մի կողմը կախ-ուած է օրինաց հրամայողական գիրքը, իսկ միւս կողմը խաբուած աղջկայ աղի արցունքը: Եւ մարդ ակամայ անցնում է յիշողութիւնների անհուն տարածութիւնը, առաջ են գալիս մար-դասպաններ, կողսպտիչներ, ամեն կարգի ոճ-րագործներ, որոնք պէտք է դատապարտուէին ու ենթարկուէին աքսորման, իրաւունքների զրկման, բայց երբեմն բոլորովին արդարացի կերպով, ազատ են ճանաչուած նոյն օրինագր-քի, նոյն դատաւորների միջոցով: Մեր յիշողու-թեան մէջ պատկերանում է մայրաքաղաքի խո-շոր բարերարի, երիտասարդ դիակը, արիւնա-թաթախ ընկած մի բարձրագոյն կրթութիւն ստացած բժշկի գնդակից, այն էլ առանց հիմ-նական լուրջ պատճառների, գուցէ միայն սի-րային հողի վրայ, ըոպէական ազդեցութեան տակ, տաք գլխի թելադրութեամբ. մի կեանք, որ դեռ պէտք է ապրէր և օգտաւէտ լինէր ոչ միայն իրեն և իւր մտերիմներին, այլև մի ամ-բողջ հասարակութեան, մի ամբողջ պետութեան, բայց այժմ անշնչացած ընկած է, իսկ սպանողը արդար է կացուցուած. բայց արդեօք աբսուրդ չէ տեսնել այդ նոյն բժշկին դատապարտուած

արսորման, իրաւունքներից զրկուած, արհեստական վիժում անելուն համար...

Ինչպէս տեսնում ենք, խնդիրը բարդուած է և մենք, զուրս չգալու համար մեր ծրագրից, թողնենք նման գէպքերն և անցնենք մեր նիւթին:

Սօսելով հակաբեղմնաւորական միջոցների մասին, պէտք է յիշենք, որ այդ միջոցները բացի նրանից, որ արգելք են հանգիստանում բեղմնաւորման, նրանք մեծ դեր են խաղում և ինչպէս հակավարակիչ միջոցներ վեներական ախտերից. ում չեն յայտնի վեներական ախտերի պատճառած ահագին վնասներն և ում չէ յայտնի, որ տղամարդիկ աւելի շատ են հիւանդանում քան կանայք, շնորհիւ իրենց սանձարձակ սեռական ձգտումներին, որոնց գոհացում տալու համար դիմելով շրջիկ աղջիկների, որոնք կարելի է ասել, համարեա բոլորը, առանց բացառութեան, հիւանդ լինելով վեներական ախտերով ներկայանում են ինչպէս վարակման աղբիւր: Այստեղից է ահա սկսուած ընտանիքի դժբախտութիւնը, այստեղ է կնոջ ու երեխաների հիւանդութեան իսկական բոյնը. վարակուած տղամարդը վեներական ախտերի թոյնը բերելով իւր օձախը, վարակում է իւր կնոջն և ապա երեխաներին:

Հակաբեղմնաւորական կամ ներկայ դիպուածում հակավարակիչ միջոցների գործածութիւնն այսպիսի գէպքերում ևս անհրաժեշտ է, որպէսզի հիւանդ տղամարդը չկարողանայ վարակել իւր կնոջը:

Միաժամանակ, նոյն հակավարակիչ միջոց-

ները պէտք է գործադրուին կասկածելի կանանց հետ սեռական յարաբերութեան ժամանակ. եթէ երիտասարդի կամ պատանու սեռական ձգտումները չեն հնազաղուած ժուժկալութեան, այդ դէպքում նրանք պէտք է լինեն չափազանց զգոյշ իրենց սկզբնական անփորձ քայլերին, նրանք բազմակողմանի կերպով պէտք է ծանօթանան վեներական ախտերի քայքայիչ հետեանքների հետ, նրանք պէտք է իմանան այն բոլոր հակավարակիչ միջոցները, որոնց գործադրութեամբ գոնէ որոշ չափով կարելի է ապահովել առողջութիւնն և վերջապէս այդ երիտասարդները նախ պէտք է իմանան, որ չկայ և ոչ մի շրջիկ կին՝ պրօստիտուտկայ, որ վարակուած չլինի վեներական ախտով և երկրորդ, նրանք պէտք է մտածեն, որ ոչ միայն պրօստիտուտկան այլ և մնացած կանայք, որոնք գալիս ու ենթարկուած են նրա սեռական պահանջներին բաւականութիւն տալուն, կարող են նոյնպէս հիւանդ լինել: Մենք կրկնում ենք, որ վերջին դէպքերում, առանձնապէս ի նկատի առնելով սոսանակի (трипперъ) շատ տարածուած լինելը, կարելի է վարակուել և ամենամաքուր ճանաչուած կնոջից:

Այս հակավարակիչ միջոցների մասին մենք կը դառնանք հակաբեղմնաւորական միջոցների թւում. որպէսզի մեզ համար պարզ լինի հակաբեղմնաւորական միջոցների նպատակայարմար գործադրութիւնն և նշանակութիւնը, մի քանի խօսքով նկարակագրենք բեղմնաւորութեան ընթացքը: Բեղմնաւորումն կատարուած է հետեւալ կերպով՝ սեռական յարաբերութեան ժամանակ

արական միլլիօնաւոր սերմնորդները (спермато-
зоидъ) սերմնահեղուկի հետ միասին ընկնելով
հեշտոցի մէջ և ապա այդտեղից արգանդի բե-
րանի միջոցով ծծուելով արգանդի մէջ, այդ
միկրոսկոպային փոքրիկ մարմիններն իրենց սե-
փական շարժումներով անցնում են դէպի ձու-
անցքը, որտեղ և սովորաբար բեղմնաւորում են
հանդիպելով կանացի ձուին, որը ձուարանից
իջնում է դէպի արգանդը: Բեղմնաւորուած ձուն
հասնելով արգանդին, կպչում է նրա մաղա-
սամաշկին և ապա շրջապատուելով այդ մաղա-
սամաշկի ծալուածքներով սկսում է զարգանալ:

Այս կարճ նկարագրութիւնից մենք տես-
նում ենք, որ բեղմնաւորման խոչնդոտ կարելի
է հանդիսանալ այն ժամանակ, երբ մենք որևէ
միջոցով թոյլ չտանք առնական սերմին՝ սերմ-
նահեղուկին մուտք գործելու արգանդի մէջ:

ՀԱԿԱԲԵՂՄՆԱԻՌՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Բոլոր եղած հակաբեղմնաւորական միջոցնե-
րը բաժանուում են երկուսի՝ ընական և արուե-
տական: Արուետական միջոցներն էլ իրենց կող-
մից դարձեալ բաժանուում են երկուսի՝ մեխանի-
քական և քիմիական: Մեխանիքական միջոցները
նրանք են, որոնց գործադրութեամբ այս կամ
այն եղանակով խանգարում ենք սերմնահեղուկի
մուտքը դէպի արգանդը՝ իսկ քիմիական են կոչ-
ւում այն բոլոր միջոցները որոնց գործածութեամբ
ոչնչացնում ենք սերմնահեղուկի մէջ գտնուող
միլլիօնաւոր սերմնորդների կենսունակութիւնը:

ԲՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Դոկտոր Բրէզիս, շատ արդարացի կերպով
նկատում է, որ ամեն անգամ երբ խօսք է լի-
նում հակաբեղմնաւորական միջոցների մասին,
միշտ առաջին տեղն են տալիս ժուժկալուժեանը,
ինչպէս բնական միջոցի. սակայն այս խորհուրդը
պէտք է համարել չափանդանց նախ, պարզամիտ-
քանի որ ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ
ժուժկալուժեան ժամանակ՝ այն դէպքում, երբ
տեղի չի ունենում սեռական յարաբերութիւն չի
կարող բեղմնաւորումն կատարուել. հէնց հարցն էլ
նրանումն է կայանում, որ ցոյց տրուին այնպիսի
միջոցներ, որոնց գործադրութեամբ կարելի լինի
սեռական յարաբերութիւն ունենալով հանգերձ
բեղմնաւորումն չլինի: Բոլորովին ուրիշ հարց է,
եթէ մենք խօսենք սեռական յարաբերութեան
ժամանակի վերաբերմամբ. այստեղ խնդիրն
ստանում է այլ կերպարանք՝ գիտնականապէս
հաստատուած է, որ ամսականից (դաշտան—
менструация) անմիջապէս յետոյ կատարուող սե-
ռական յարաբերութիւնն ամենամեծ խոստումն
է տալիս բեղմնաւորման և ընդհակառակը բեղմնա-
ւորման դէպքերի թիւը պակասում է, որքան
հեռանում ենք ամսականի ժամանակից: Այս հար-
ցը մանրակրկիտ կերպով հետազօտելով պրօֆ.
Գէնզէն, եկել է հետեւեալ եզրակացութեան.

- 1) Բեղմնաւորումն մեծ մասամբ առաջ է
գալիս իբրև հետեանք այն սեռական յարաբերու-
թիւնների, որ տեղի են ունենում առաջի 8 օրուայ
ընթացքում, ամսականը վերջանալուց յետոյ:
- 2) Աւելի քիչ բեղմնաւորումն է լինում մինչև

ամսականի սկսուելը կատարած յարաբերութիւնից:

3) Բեղմնաւորման ամենաքիչ տոկոսը ընկնում է այն յարաբերութիւններին, որ կատարուում են ամսականի առաջին օրերին. որքան աւելի մօտենում ենք դաշտանի վերջանալուն, այնքան էլ մեծանում է բեղմնաւորման շանոն:

Վերջապէս չկայ մի օր, որը հաստատապէս ապահոուէր բեղմնաւորութիւնից, լինի այդ մինչև ամսականը, ամսականի ժամանակ, կամ թէ յետոյ միևնոյն է:

Գէնդէնի դիտողութիւններն արդարացնում են նոյնպէս Ֆէօկտիստովի ստատիստիկան, որից երևում է, 85 բեղմնաւորութիւնից 62-ը հետևանք են դաշտանի վերջանալուց անմիջապէս յետոյ տեղի ունեցած սեռական յարաբերութեան, 13-ը դաշտանի վերջանալուց 9 օր յետոյ կատարուած յարաբերութեան, 9-ը դաշտանից 11 օր անցնելուց յետոյ և վերջապէս մի դէպք դաշտանից 23 օր յետոյ կատարուած յարաբերութիւնից: Այստեղից երևում է, որ որքան շատ աւելի ժամանակ է անցնում դաշտանից, նոյնքան էլ բեղմնաւորման շանսը փոքրանում է, բայց ի հարկէ դրա հետ միասին չպէտք է մոռանալ, ինչպէս վերն էլ յիշեցինք, որ չկայ անց 1 օր, որ միանգամայն կնոջն ապահոուէր բեղմնաւորութիւնից:

Բացի Գէնդէնից և Ֆէօկտիստովից, այս հարցով զբաղուել են նոյնպէս և ուրիշները, որոնք նոյնպէս առաջարկում են խոյս տալ յարաբերութիւնից դաշտանը սկսուելուց յետոյ հաշուած մօտ երկու շաբաթ ինչպէս և դաշտանից 3—4 օր առաջ:

Սակայն այս բոլորն ընդունելի են թէօրիապէս, իսկ գործնական տեսակէտից չաւանս ոչ մի նշանակութիւն, որովհետև, ինչպէս այդ հաստատում է և դր. Բրէդիսը, եթէ մի դաշտանից մինչև հետևող դաշտանի 4 շաբաթ ժամանակամիջոցից գուրս գանք երկու շաբաթ և 3—4 օր կըմնայ $1\frac{1}{2}$ շաբաթ և եթէ ի նկատի առնենք, որ շատ կանանց դաշտանը տևում է շատ աւելի երկար քան սովորական ընդունուած 3—5 օրը, այն ժամանակ գուրս է գալիս, որ այդ թոյլատրուած 1 և կէս շաբաթը պէտք է էլ աւելի պակասի և բացի դրանից եթէ ի նկատի առնենք, որ այդ ժամանակամիջոցում կատարուած յարաբերութիւնն էլ կարող է բեղմնաւորումն առաջ բերել, այն ժամանակ մեզ համար պարզ կլինի, թէ որքան խախուտ են այդպիսի մի հակաբեղմնաւորական միջոցի հիմունքները:

Պէտք է յիշե՛ք, որ շատերը խորհուրդ են տալիս երեխայի ծծով կերակրելու ժամանակամիջոցը արհեստականօրէն երկարացնելը, որը նոյնպէս խոչնդոտ է հանդիսանում բեղմնաւորման: Այս կարծիքը յայտնողներն իրենց ասածը հաստատում են այն հիման վրայ, որ կանայք կրծքով կերակրելու ժամանակամիջոցում շատ հագուազիւտ դէպքերում են միայն յղիանում. սակայն այս ենթադրութիւնը գործնական տեսակէտից չի համապատասխանում իրողութեան, որովհետև շատ յաճախ ծծով կերակրող մայրերը, երբ նրանք բոլորովին առողջ են, յղիանում են:

Այնուհետև կան մի շարք ուրիշ բնական միջոցներ էլ, որոնք դարձեալ գործադրուում են

ինչպէս հակաբեղմնաւորական միջոցներ, բայց դրանք բոլորն էլ կամ չեն արդարացնում իրենց վրայ դրած պարտականութիւնը, կամ վնասակար լինելով շատ վատ են ազդում առողջութեան վրայ:

Այս վերջին տեսակին է պատկանում «Ֆրանսիական» կոչուած յարաբերութիւնը, այսինքն՝ երբ սերմնահոսութեան ժամանակ գոյգը յարաբերութիւնն ընդհատում է, թոյլ չտալով սնրմի մուտքն արգանդի մէջ:

Մենք չենք յիշիլ միւս այս կամ այն ազդին յատուկ բնական միջոցները, որովհետև ինչպէս վերն էլ ասացինք դրանք բոլորն էլ հակաառողջ են, ուստի և կանցնենք արուեստական միջոցներին:

ԱՐՈՒԼՍՏԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Խօսելով արուեստական միջոցների վերաբերեալ մենք առաջին տեղը պէտք է տանք կօնդօմներին, որոնք պատրաստուում են կամ ըէտինից (գուտապերչ, կառուչուկ) և կամ ոչխարի կոյր աղիքից:

Սա ամենահին միջոցն է, որ մինչև այժմ էլ մնացած է՝ իբրև ամենաապահովը՝ եղածներից:

Դեռ ևս 16-դ դարում իտալացի բժիշկ Ծալլօպեան խորհուրդ էր տալիս գործադրել կօնդօմն իբրև լաւ պահպանողական միջոց վնասեալ կամ ախտերից և միաժամանակ իբրև հակաբեղմնաւորական միջոց. հետևապէս սխալ է այն ենթադրութիւնը, որ իբր կօնդօմ բառը ծագել է անգլիացի բժիշկ Կօնտօնի (D-r Conton) անու-

նից, որը աւելի ուշ ժամանակներում էր ապրում. աւելի հեշտութեամբ պէտք է ենթադրել թէ կօնդօմ բառը ծագած լինի ֆրանսիական կօնդօմա քաղաքից, ուր մի ժամանակ պատրաստելիս են եղել մեծ քանակութեամբ կօնդօմներ: Կայ և մի ուրիշ ենթադրութիւն կօնդօմ անուան համար՝ կարծում են, որ սա տոաջացել է condus բառից, որ կընշանալէ պահպանող (предохранитель):

Ինչպէս վերն էլ յիշեցինք, ներկայումս գործադրուում են երկու զխաւոր տեսակի կօնդօմներ այն է աղիքային և ըէտնային:

Առաջին տեսակը, որ ռխայմամբ անուանում են նոյնպէս ձկան փամփուշտի կօնդօմ, պատրաստուում է ոչխարի կամ այծի կոյր աղիքից և ոչ թէ ձկան փամփուշտից, ինչպէս այդ սխալմամբ անունն է ցոյց տալիս: Սա պատրաստուում է հետևեալ կերպով՝ ոչխարի կամ այծի (երբեմն եզան և հորթի) կոյր աղիքի ճարպային և մսային մասերը բուծ դանակով հեռացնելով և միմիայն միջի բարակ միաւորեցուցիչ թաղանթը թողնելով դնում են 20% պօտաշի լուծուածքի մէջ, ուր մնում է 12 օր. պօտաշի լուծուածկը ամեն օր փոխում են. այնուհետև աղիքը դրնում են ծծմբի մէջ, որտեղ աղիքը կորցնում է իւր գոյնն և ենթարկուում է ախտահանութեան: Ապա նորից դանակով մաքրում են դանազան աւելորդ մնացած թելերից և ապա փչելով ուռցնում են ու այնպէս չորացնում, որից յետոյ կըրկին անգամ դնում են պօտաշի հեղուկի մէջ և թողնում 18 օր, դարձեալ ամեն օր փոփոխելով հեղուկը: Այնուհետև կօնդօմը արդէն պատրաստ

է, կարելի է կրկին փշել, չորացնել և տալ որոշ ձև: Կօնդօմները պատրաստելուց յետոյ, նրանց դասաւորում են. և այն կօնդօմները, որոնք պատրաստուելուց չեն վնասուում, այսինքն ճեղքուածքները չեն ստանում և նուրբ՝ բարակ են լինում, ընդունում են իբրև ամենալաւերը և գնահատուում են բաւականին թանգ. երբեմն էլ ճեղքուածք ստացած կօնդօմները կարկատում են կրպոցներով սոսնձով նոր փոքրիկ լաթեր. սակայն այդ լաթերը շատ հեշտութեամբ կարելի է նկատել եթէ մենք բռնենք կօնդօմը լոյսի դիմաց և կամ եթէ լոյսի դիմաց թեք պահենք, այն ծամանակ սոսինձը փայլում է և լաթը նկատելի է լինում: Պէտք է պոյշ լինել լաթերի նկատմամբ, որովհետև ճարպիկ մասնագէտները, լաթերը ծածկելու համար, կօնդօմները շրջում են մէջի երեսին և այդպիսով գնողի աչքից հեռացնում լաթն և սոսնձի փայլը: Լաթաւոր կօնդօմները բանի պէտք չեն, որովհետև կպցրած կտորները թրջուելով պոկւում են ու հետևապէս կորցնում են իրենց հակաբեղմնաւորական կամ հակավարակիչ նշանակութիւնը:

Աղիքներից պատրաստուած կօնդօմները ըստ որակի բաժանուում են 3—4 սերիայի:

| | |
|--|-----------------|
| Առաջին տեսակը ամինից նուրբն է, որի հաստութիւնը հասնում է | 0,008, 0,01 mm. |
| Երկրորդ տեսակինը՝ | 0,012—0,015 » |
| Յրրորդ տեսակինը՝ | 0,017—0,023 » |
| Չորրորդ տեսակինը՝ | 0,025—0,03 » |

Մնացած տեսակի կօնդօմները, որ պատրաստուում են ոչ ոչխարի աղիքներից աւելի հաստ են լինում:

Կօնդօմների լաւ յատկութիւնը կարելի իմանալ նոյնպէս և գոյնից ու քաշից. նրանք այնքան լաւ են, որքան թեթեւ են ու փափուկ. և որքան աւելի սպլիտակ են նոյնքան էլ թարմ կարելի է հաշուել. ընդհակառակը, եթէ կօնդօմի վրայ կան դեղին բծեր, դա նշան է, որ նա երկար ժամանակ ընկած է մնացել և որ արդէն ճարպային մասերը նեխուել և փշաջրել են նրա դիմացկանութիւնը:

Լաւ կօնդօմները թափանցիկ—սպիտակ գոյն ունին և կարելի է երկար ժամանակ միկնոյն կօնդօմը գործածել եթէ համապատասխան խնամք տարուի:

Գործածուած աղիքային կօնդօմներից կըրկին օգտուելու համար, պէտք է նրան յարաբերութիւնից յետոյ դնել ջրի մէջ, ապա մաքուր լուանալ, չորացնել, մաքուր սրբելով երկու երեսն էլ, փշելով ուռցնել, կապել և թողնել այդ դրութեամբ չորանալու: Երբ որ բաւականին չորանում է պէտք է փշած օդը դուրս հանել, բերանի կողմը շտկել կապուածքի ծալքերից և քսել ճարպ. այդպիսով կօնդօմը պատրաստուում է նորից գործածութեան համար:

Պրօֆ. Ֆօրէլ առաջարկում է կօնդօմը պատրաստել տնային կերպով: Նա խորհուրդ է տալիս գնել մսավաճառից հորթի թարմ կոյր աղիքը, մաքրել նրան թէ ճարպային և թէ այլ մասերից և թողնել միայն միջի բարակ թաղանթը, ապա դնել սուլէմայի լուծուածքի (1 : 1000) մէջ, մի օր այդտեղ թողնելուց յետոյ հանել և չորացնել, որից յետոյ կարելի է գործածել իբրև խանութից գնած: Այդպիսի կօնդօմները սո-

վորաբար գործածելուց յետոյ պէտք է լուանալ և պահել գլխցերինի մէջ:

Աղիքային կօնոսմները գործածելուց առաջ պէտք է փափկացնել գոլ ջրի մէջ և հեռացնել բերանին փաթաթած թելը:

Րէտինի կօնոսմները վերջին ժամանակներս սարսափելի կերպով տարածւած են. սրանք պատրաստուում են ամենաբարակ րէտինից: Լաւ րէտինի կօնոսմները տարբերուում են նրանով, որ շատ բարակ են լինում, 0,1 մինչև 0,3 m-met. և պատրաստուում են այսպէս անուանուած թաւշեայ րէտինից:

Որոշելու համար թէ ճրքան դիմացկուն կամ վիրաւորուած չէ րէտինի կօնոսմը, պէտք է նրան հազցնել երկու մատերին և ապա մատերն իրարից հեռացնելով՝ (բաց անելով) րէտինը լայնացնել, եթէ լայնացնելուց կօնոսմը չի պատուում, այն ժամանակ կարելի է համոզուել, որ գործածելուց էլ չի պատուել:

Վերջին տարիներում շուկայ են հանուած և ուրիշ շատ տեսակի կօնոսմներ էլ, ինչպէս «семе́йные», «Anticoncepta», «Seminal-Intercceptor» և այլն, դրանցից ուշադրութեան արժանի են միայն առաջինները՝ «семе́йные» կոչւածները, որոնք իբրև հակաբեղմնաւորական միջոց թէև ընդունելի են, բայց այդ տեսակի կօնոսմները չեն ապահովում վարակումից, նամանաւանդ սիֆիլիսից:

Պէտք է ասել, որ վերջերս կօնոսմներին բէկլամային բնոյթ է տրուած և շատ անգամ ամենահասարակ աղիքի կօնոսմների ճարպիկ արտահանողները ծախում են թանգ գնով, իբրև ամենալաւերը:

Անգլիայում այդ արհեստով պարապողները չեն խնայում և սչ մի միջոց իրենց ապրանքը գովելու և աչքի զարնելու համար. այսպէս օրինակ ծախւում են կօնոսմներ բարձր դիրք ունեցող անձնաւորութիւնների պատկերներով, ինչպէս օրինակ՝ մի ժամանակ Գլադստոնի և ուրիշների:

Կօնոսմները շուտ չփչանալու համար պէտք է պահել չոր և սառն տեղ և ոչ թէ գրպաններում, որ սովորաբար ընդունուած է, որտեղ նրանք տաքանալով շուտ շատ փչանում են:

Կօնոսմների նշանակութիւնը շատ մեծ է վնասերական ախտերից չվարակուելու տեսակէտից. բոլոր յայտնի վնասերելօգները հաստատում են կօնոսմի այդ մեծ նշանակութիւնը, եթէ նրանք լաւ նիւթից են պատրաստուած և զգուշ թեամբ են գործադրուում:

Ինչ վերաբերում է կօնոսմների արժէքին, ինչպէս հակաբեղմնաւորական միջոց, այդ էլ հաստատուում է բոլորից, եթէ դարձեալ կօնոսմը բաւականին դիմացկուն է և չէ պատուում յարաբերութեան ժամանակ. իսկ ինչ վերաբերում է կօնոսմների գործածութեանը առողջապահական տեսակէտից, այստեղ անա գիտնականների կարծիքը փոխուում է: Այն հարցը թէ ինչ ազդեցութիւն է թողնում կօնոսմը սեռական գործողութեան վերաբերմամբ և թէ արդե՞ծ օրգանիզմի վրայ վնասաբեր ազդեցութիւն չունի՞ առաւել ևս երբ երկար ժամանակ է գործադրուում: Մօսք չկայ, որ կօնոսմի գործածութիւնը որոշ չափով փոխում է սեռական ակտի զգայնութիւնը. նամանաւանդ տղամարդու վերաբերմամբ, բայց այդ զգայնութեան տարբերումն կարելի է հասցնել

ամենաչնչին չափերի եթէ գործադրուին ամենանուրբ կօնդօմները: Պէտք է պնդել, որ Չղային և թոյլ անհատների վերաբերմամբ եթէ նրանք շարունակ գործ են ածում, կարող է վատ ազդել: Այսպէս թէ այնպէս պէտք է աւելացնենք, որ մինչև այժմ եղած միջոցներից ամենանպատակաշարմարը կարելի է ընդունել կօնդօմը, երբ որևէ պատճառով անհրաժեշտօրէն պահանջուում է կնոջից խոյս տալ յղիութիւնից. օրինակի համար՝ երբ կինը հիւանդոտ է, կամ երբ կոնքը չափազանց նեղ է, վերջապէս թոքախտի, սիֆիլիսի ժամանակ:

Այսքանով բաւականանք տղամարդու համար գործածուող կօնդօմներով և անցնենք մի քանի խօսքով կանացի կօնդօմներին կամ ինչպէս ասուում են փակուող պէսսարներին (pessarium oc- caluseum):

Դօկտոր Մէնսինգը գործածութեան մէջ է մտցրել մի տեսակի կիսաղնդաձև կաուչուկի թաղանթներ, շրջապատուած բերանի մօտ նուրբ օղակով. այս կիսագնդերը մտցնում են հեշտոցի մէջ և օղակի մասով շրջապատելով արգանդը, ծածկում են արգանդի բերանը, որով և խոչնդոտ են հանդիսանում սերմի մուտքը դէպի ներս. յարաբերութիւնից յետոյ սովորաբար մի առ ժամանակ թողնում են կինսագնդերը այդ դրութեան մէջ, որի ժամանակամիջոցում սերմնորդները կորցնում են իրենց բեղմնաւորող ոյժը, ուրիշները յարաբերութիւնից յետոյ սրսկում են (спринцоватъ) ջրով կամ աւելի լաւ՝ ախտահանող լուծուածքով և այն ժամանակ արդէն կարելի է հանել պէսսարը:

Ժամանակի ընթացքում Մէնսինգի պէսսարն ենթարկուում է զանազան փոփոխութիւնների թէ Մէնսինգի կողմից և թէ ուրիշների, ինչպէս դոք. էրլէտի, Վիլհէլմի և այլն... յամենայն դէպս դրանք բոլորն էլ ունին իրենց որոշ պակասութիւնները:

ԽՅՈՒՈՂ ՊԵՍՍԱՐՆԵՐ

(Սպունգներ, տամպօններ և այլն)

Բացի յիշեալ հակաբեղմնաւորական միջոցներից, գործածութեան մէջ են նոյնպէս զանազան սպունգներ և տամպօններ, որոնք պատրաստուում են ծովային սպունգից, բնական մետաքսից, սպունգային րէտինից, բամբակից, մարլից և այլն: Սրանց նպատակը հետևեալն է՝ ունենալով խցանի ձև դրուում են արգանդի բերանին, որով և խանգարում են սերմնորդների մուտքը դէպի արգանդի ներսը: Պէտք է նկատել, որ այդ խցաններով օգտուողները, յարաբերութիւնից յետոյ պէտք է ջրային որևէ լուծուածքով ողողեն հեշտոցը, որպէսզի մաքրեն սերմնորդներից, այլապէս չի կարելի յուսալ, որ խցանը հանելուց յետոյ դարձեալ սերմնորդները ներս չեն գնալ և չեն բեղմնաւորուիլ:

Չնայած որ վերջերս չափազանց շատ նորանոր ձևերի խցաններ են շուկայ հանուած, բայց պէտք է ասենք, որ դրանք բոլորն էլ աննպատակաշարմար են և եթէ շինուած են լինում զանազան մետաղներից, ինչպէս շատ յաճախ շինուում են արծաթից, դրանք նոյնիսկ վնասակար են.

Մենք չենք երկարացնի մեր խօսքը մնացած այն բոլոր միջոցների վերաբերմամբ, որոնք առաջարկում են ամեն օր զանազան անհատներից և ֆիրմաներից, այլ կանցնենք քիմիական միջոցներին, որոնց նպատակն է ոչնչացնել սերմնորդների կենսունակութիւնը:

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Քիմիական միջոցների դերը նրանումն է կայանում, որ չեզոքացնում են հեշտոցի մէջ ընկած սերմնորդներն և այդպիսով խանգարում բեղմնաւորումն. սակայն պէտք է ի նկատի առնել, որ այս միջոցն արմատական չէ, այլ յարաբերական, որովհետև բոլոր քիմիական միջոցները մենք կարող ենք ներսրսկել միմիայն հեշտոցի մէջ և ոչ թէ արգանդի, այնինչ, ինչպէս գիտէք, շատ յաճախ հէնց յարաբերութեան վայրկեանին սերմնորդներն ընկնելով հեշտոցի մէջ այդտեղից էլ իսկոյն ծծւում են դէպի արգանդը, որով և անհնարին է լինում, որևէ քիմիական միջոցով նրանց չեզոքացնելը կամ աւելի ճիշտ կենսունակութիւնից զրկելը:

Քիմիական հակաբեղմնաւորական միջոցները գործադրւում են ինչպէս լուծուածքի, փոշու և կամ գնդիկի ձևով. առաջինն ու երրորդը աւելի յարմար լինելով՝ աւելի շատ են գործադրւում, քան փոշին, վերջինս գործադրուելու համար անհրաժեշտ է ունենալ բաւական բարդ ներփչող գործիք, որով կարելի լինի հաւասարապէս ներս փչել արգանդի շուրջն ամենուրէք քիմիական փոշին, իսկ այդ շատ դժուար է և համարեա անհնարին.

Ինչ վերաբերւում է գնդիկներին, պէտք է ասել, որ դրանց նպատակն էլ նոյնն է, ինչ որ փոշուներ, այսինքն պատրաստել այնպիսի հող, կամ աւելի ճիշտ այնպիսի դրուժիւն ստեղծել իգական սեռական գործարանում, ուր ոչնչանային սերմնորդները: Այդպիսի ընդունակութիւն ունին թթւուտները, որոնց խառնելով, տաքութիւնից հեշտ հալուող նիւթի հետ և կտր կամ ձուածկ գնդիկների ձև տալով յարաբերութիւնից առաջ դնում են հեշտոցի մէջ, որտեղ նա կամայ կամայ հալւում է և ապա խառնուելով սերմնորդների հետ նրանց ոչնչացնում է:

Իբրև հալուող նիւթ սովորաբար վերցնում են կակաօի իւղ, որ հեշտութեամբ հալւում է:

Հեշտոցային գնդիկները, որ սովորաբար խառնութենքում ծախւում են, ունին հետևեալ կազմութիւնը:

Ունդէրի հակաբեղմնաւորական նշեր.

| | |
|------------------------------|------|
| Сѣрнокислый хининъ | 0,15 |
| Борная кислота | 0,35 |
| Хинозолъ | 0, 6 |
| Масло-какао | 12,0 |

Բոլորը միասին լաւ խառնելուց յետոյ պատրաստում են 10 հատ նշած գնդիկներ:

Շվէյցէրի հակաբեղմնաւորական նշեր.

| | |
|-----------------------------|------|
| Хинозолъ | 0,3 |
| Сѣрнокисл. хининъ | 0,3 |
| Масло-какао | 15,0 |

Խառնել և պատրաստել 10 հատ նոյնաձև գնդիկներ:

Դոկտոր Կамպ-ի նշեր.

| | |
|-----------------------------|------|
| Тимоль | 0,1 |
| Сѣрнокисл. хининъ | 0,5 |
| Борная кислота | 0,5 |
| Масло-какао | 15,0 |

10 հատի համար:

«Amur» կոչւած գնդիկներ.

| | |
|------------------------------|------|
| Тимоль | 0,1 |
| Солянокисл. хининъ | 0,4 |
| Масло-какао | 19,0 |

Պատրաստել 10 հատ գնդիկներ:

Յարաբերութիւնից յետոյ մինչև գնդիկի հալ-
ւելը պէտք է կիրնը հանգիստ մէջքի վրայ պառ-
կած մնայ, որից յետոյ, որպէսզի հեռացնուի հալ-
ւած իւղային մասերը, պէտք է հեշտոցը ողողել
էսմարխի դոյլի (кружка Эсмарха) միջոցով գոլ
ջրով: Այս միջոցներն էլ ունին իրենց թերութիւն-
ները, որով և չեն հանդիսանում ինչպէս իսկական
արմատական հակաբեղմնաւորական միջոցներ: Մեզ
մնում է խօսել այժմ այն բոլոր քիմիական մի-
ջոցների մասին, որոնք գործադրում են իբրև զա-
նազան լուծուածքներ, յարաբերութիւնից յետոյ
հեշտոցն ողողելու համար:

Կարելի է ասել, որ շատ անգամ նոյն իսկ
սովորական գոլ ջուրը նոյնպէս կարելի է գործա-
ծել, ինչպէս հակաբեղմնաւորական միջոց, որը
լուանում է հեշտոցն և սերմնորդներից ազատում,
բայց աւելի յուսալի է ջրի մէջ խառնել որևէ
թթւուտ, որոնցից հետևեալներն աւելի գործա-
ծական են:

Կարբօլեան թթւուտի լուծուածք.

Պէտք է վերցնել 2⁰/₀ լուծուածք, որը սովորաբար
ստացւում է գեղատնից և կամ մեծ զգուշութեամբ
պատրաստել տանը, միայն ոչ աւել քան 2⁰/₀:
Կարբօլեան թթւուտի լուծուածքն այն թերութիւ-
նն ունի, որ երկար և յաճախակի գործածելուց
հեշտոցի մաղասաթղանթը (слизистая обо-
лочка) կորցնում է իւր քնքուշութիւնը, բացի
այդ կարբօլեան թթւուտը ունի անդուրեկան
հոտ:

Բորակաթթւուտային (բօրնի) լուծուածք.

(Растворъ борной кислота)

Վերցնել մի թէյի գդալ բորակ մի բաժակ
եփած ջրի մէջ, որովհետև բորակը տաք ջրում
հեշտ է հալուում, հետևապէս աւելի յարմար է
վերցնել 3 գդալ բորակ և լուծել մի բաժակ եփ-
ւող ջրի մէջ, ապա խառնել կրկին 2 բաժակ
եփած սառը ջրի հետ: Այդ քանակութեամբ լուծ-
ուածքը բաւական է մի անգամ գործածելու հա-
մար:

Պղնձային արջասպի լուծուածք.

(Растворъ мѣднаго купороса)

Գործադրում է 1/2 մինչև 1⁰/₀ լուծուածք:

Յինկային արջասպի լուծուածք.

(Растворъ цинкаго купороса)

Գործադրում է 2⁰/₀ լուծուածք:

Վերմանգանական կալիի լուծուածք.

Растворъ марганцевокислаго калия.

Վերցնում են 3⁰/₀ լուծուածք. պէտք է զգոյշ

գործածել, որովհետև սպիտակեղէնի վրայ թողնում է չլուացուող բծեր:

Սուլեմայի լուծուածք.
(Ростворъ сулемы.)

Այս լուծուածքը պատրաստուում է դեղատներում, պէտք է խոյս տալ տանը պատրաստելուց, որովհետև ուժեղ լուծուածքը վտանգաւոր՝ թունաւորիչ է, դեղատներում զգուշութեամբ պատրաստուում է $\frac{1}{10}^0\%$ այսինքն 1000 մասին մի մաս, որպիսին վտանգաւոր չէ գործածութեան համար:

Պաղլեղի լուծուածք.
(Растворъ квасцовъ.)

Պատրաստուում է նոյն ձևով և նոյն քանակութեամբ ինչ որ բորակի համար յիշեցինք:

Լուծուածքների տաքութեան աստիճանը չը պէտք է 24⁰ Բէօմիւրից պակաս լինի և ոչ էլ շատ տաք. սառը ջուրը սովորաբար վատ է ազդում սեռական օրգանի գանազան մասերի վերաբերմամբ:

Չրով կամ որևէ լուծուածքով ողողելու համար սովորաբար գործադրուում է էսմարխի դոյլը, որը իրենից ներկայացնում է ապակէ ափսէ, մօտ 5 բաժակ ջրի տարողութեամբ. ափսէն ներքևի մասում ունի անցք, որին, միացրած է երկար ըէտինի խողովակ, որը վերջանում է կաուչուկի կամ ապակէ ծայրով: Այս գործիքը կոչուում է նոյնպէս իրրիգատօր, որը կախուում է պատից ոչ աւել քան 2 արշին բարձրութեան վրայ, որպէսզի հոսող ջրի ոյժը շատ մեծ չլինի: Առաջարկուում է նոյնպէս մի տեսակ լարմարեցրած

աթոռ, որ կոչուում է Բիդէ, սակայն սա այնքան էլ նպատակայարմար չէ, որովհետև ամենայարմար դրութիւնը հեշտոցն ողողելու համար, դա մէջքի վրայ պառկած դիրքն է, որով միայն կարելի է հեշտոցը կանոնաւոր լւանալ և ազատել սերմնորդներին:

Ժամանակի ընթացքում գանազան առևտրական ֆիրմաներ արտահանած են գանազան ապարատներ էսմարխի դոյլը փոխարինելու համար, այսպէս օրինակ «Վէնուս», «Ալփա», «Կլիգօպօմպ», «The Wonder donche», «Րէֆլիւքս» և այլն, սակայն սրանք բոլորն էլ ունեն իրենց անյարմարութիւնները, միայն շնորհիւ հզօր ըէկլամայի այսօր էլ մեծ քանակութեամբ ծախուում են:

էսմարխի դոյլը նրանով է յարմար, որ համարեա ամենուրէք կարելի է ձեռք բերել, շատ էլ թանգ չէ և տան մէջ ուրիշ նպատակներով էլ պէտք է գալիս,

Սօսելով գանազան լուծուածքների մասին, չպէտք է մոռանանք յիշելու, որ հեշտոցի լուացումը սովորական մաքուր՝ ոչ սառն ջրով անհրաժեշտ է և առողջապահութեան տեսակէտից: Գիտնականօրէն ապացուցուած է, որ շատ յաճախ արգանդի, հեշտոցի և ձուանցքի հիւանդութիւններից շատերը հետևանք են սեռական անգամի անմաքրութեան:

Ինչպէս վերն էլ ասացինք, մաքուր ջուրը ևս հանդիսանում է ինչպէս հակաբեղմնաւորական միջոց, այս բանը կարելի է հաստատել նրանով, որ մաքուր քիչ տաքացրած ջուրը հեշտոցի մաղասաթաղանթի ծախուածքների մէջ

մտնելով հեշտութեամբ գուրս է մղում արա-
կան սերմը և այդպիսով խոչնդոտ է հանդիսա-
նում սերմնորդների առաջխաղացութեան և ար-
գանդի մէջ մտնելուն. նոյնն է ասում Ֆօլկ-
մանն՝ «Չուրը, եթէ գործ է ածւում իւր ժա-
մանակին, առանց ուշացնելու, ներկայանում է
ինչպէս ամենահասարակ, բնական և յուսալի
միջոցը, որը ոչ թէ միայն չի վնասում առող-
ջութեանն, այլ և նպաստում է առողջապահու-
թեան և բացի այդ չի խանգարում բնական յա-
րաբերութեան, հակառակ մնացած զսնագան մի-
ջոցներին և այդպիսով Չուրը իբրև հակաբեղմ-
նաւորական միջոց կարելի է գործադրել այն
ժամանակ երբ այդ պահանջում է»:

Այստեղից պարզւում է, որ Չուրն էլ
հանդիսանում է իբրև հակաբեղմնաւորական
միջոց, թէև ոչ բոլորովին հաստատ, բայց յա-
մենայն դէպս շատ կարևոր նշանակութեամբ:

Այսպիսով ուրեմն մենք ցոյց աւինք այն
բոլոր միջոցները, որոնք պէտք է գործադրուեն
իբրև հակաբեղմնաւորական միջոցներ, եթէ այդ
պահանջում է ծնողների հիւանդութիւնը, նիւ-
թական միջոցները և մանաւանդ ժառանգա-
կանութեանը անցնող հիւանդութիւնները, որով-
հետև ինչպէս վերն էլ յիշեցինք, աւելի լաւ է
ոչ մի երեխայ չունենալ քան առաջ բերել հի-
ւանդոտ, թոյլ, վտիտ, տառապանքների մէջ
հալ ու մաշ լինող սերունդ, որ ոչ իւր համար,
ոչ ծնողների և ոչ էլ հայրենիքին օգտակար լի-
նել կարող է:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՈԼՈԳԻԱ
7/31 - 1922
ՄԱՐԴԱՆ, ՄԱՍՈՒՄԻԱՆ
ՄԱՐԿԵՏԻՆԻ

Դ Օ Ք Տ Ո Ր Վ. Խ Ա Չ Ա Տ Ր Ե Ա Ն Յ Ի

ԱՇԽԱՏՈՒԹՒԻՆՆԵՐԸ

- 1) Triphenylmonomethylarsoniumjodid
und seine pharmak. Wirkung.—
(սպառուած).
- 2) Սիֆիլիս և Հաթա-Էհրլիխեան «606»-ը
(սակաւաթիւ) 15 կ.
- 3) Сохранение здоровья (սպառուած).
- 4) Волосы 10 կ.
- 5) Բազմաձևութիւն, արուեստական ամ-
լութիւն և հակաբեղմնաւորական
միջոցներ Բ. սպ. 25 կ.

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏ Է

ա) Կնոջ «Ոսկի դիրքը».

բ) Гигиена женщины.

Հոյս տեսաւ Լ. Գրիգորեանցի «Чайка»
стихотворения 20 կ.

Գինը 25 կոպ.

3983

2013

«Ազգային գրադարան»



NL0074179

